Հարգելի բաժնետերեր.

2022 թվականը լի էր տարբեր տնտեսական և քաղաքական ճգնաժամային և հետճգնաժամային իրավիճակներով, որոնք Ընկերության կոլեկտիվի ու մենեջմենթի համար առաջացնում էին լրացուցիչ մարտահրավերներ՝ Ընկերության գործունեության շարունակականության ապահովման և զարգացման ծրագրերի իրականացման առումներով:

Ձեզ բոլորին հայտնի է, որ Ընկերությունը ծանր կորուստ ունեցավ, հանկարծամահ եղավ Ընկերության երկար տարիների ղեկավար և գլխավոր տնօրեն Է. Գ. Գրիգորյանը: Ի պատիվ նրան անբասիր, երկարամյա, բարեխիղճ արտադրության արտակարգ կազմակերպիչ, կոլեկտիվի կոմից մեծ հարգանք և սեր վայելելու համար Ընկերությունը վերանվավեց նրա անունով և այժմ անվանվում է Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի ոսկերչական գործարան:

Այնուհանդերձ, ամփոփելով Ընկերության 2022 թվականի գործունեության արդյունքները, որոշակի գոհունակությամբ կարող ենք փաստել, որ 2022 թվականին Ընկերության կոլեկտիվի ու մենեջմենթի համառ ջանքերի շնորհիվ հաջողվեց ապահովել ոչ միայն Ընկերության անխափան աշխատանքն ինչպես ներքին, այնպես էլ եվրասիական շուկաներում:

Իրականացվել է Ընկերության Տնօրենների խորհուրդի կողմից հաստատված Ընկերության 2022 թվականի կապիտալ ներդրումների ծրագրով նախատեսված տեխնիկական վերազինման, սարքավորումների վերակառուցման և արդիականացման աշխատանքները, ինչի արդյունքում չի գրանցվել պերճանքի առարկաների, ոսկերչական իրերի, թանկարժեք զարդեղենի, ժամացույցների, հանդերձանքի պարագաների արտադրության և վաճառքի աճը:

Եթե ամփոփենք Ընկերության 2022 թվականի գործունեության հիմնական տնտեսական արդյունքները թվերով, ապա դրանք հետևյալն են. հիմնական միջոցները 2022 թվականի հաշվետու տարվա վերջում կազմել են 2,431,108 հազ. ՀՀ դրամ, պաշարները՝ 1,915,259 հազ. ՀՀ դրամ, հասույթը կազմել է 1,234,451 հազար ՀՀ դրամ, զուտ շահույթը հարկումից հետո՝ 16,431 հազար ՀՀ դրամ:

Վերոնշյալ խնդիրների լուծման և ցուցանիշների ապահովման գործում իր ուրույն տեղն ունի նաև Ընկերության տնօրենների խորհուրդը, որն 2022 թվականի ընթացքում անցկացրել է 7 նիստ, քննարկել է ընթացիկ և ռազմավարական մի քանի տասնյակ հարցեր և ընդունել Ընկերության կայուն գործունեության ապահովման համար անհրաժեշտ որոշումներ:

Ընկերության տնօրենների խորհուրդի հիմնական աշխատանքների շնորհիվ ապահովվել է նաև Ընկերության բաժնետերերի իրական մասնակցությունն Ընկերության կառավարմանն և առավել կարևոր որոշումների ընդունման հարցերում:

Ընկերությունը աշխատել է մասամբ առանց խափանումների, ապահովելով հուսալի և անխափան աշխատանքը գնորդ հաճախորդներին ներքին և եվրասիական տարածաշրջանում: Առաջիկա տարում Ընկերության մենեջմենթը պետք է հաջող ապահովի «Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի ոսկերչական գործարան» ԲԲԸ-ի աշխատանքը:

Խորհրդի նախագահ՝ Հ. Ռ. Շիրինյան

Գլխավոր տնօրեն Տ. Ս. Երոյան

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱԿՑԻԱՅԻ ԷՄԻԼ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ 02556646

<ԷՄԻԼ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ> ԲԲԸ

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ Հ.5Խ-23

ք. Երևան, Արշակունյանց պողոտա 12 27.06.2022թ., ժամը 19:00

Նիստին ներկա էին՝ խորհրդի 9/ինը/ անդամները:

Խորհրդի անդամներ՝ -

Հ. Ռ. Շիրինյան, Գրիգորյան Ս.Է., Մաթևոսյան Է.Հ., Հակոբյան Ն.Խ., Մինասյան Մ.Հ., Երոյան Տ.Ս., Ղազարյան Գ.Գ. և Եսայան Հ.Լ և Գամբուրյան Ս.Կ.

Նիստի օրակարգը՝

- Ընկերության խորհրդի նախագահի և խորհրդի քարտուղարի ընտրությունը:
- Այլ հարցեր

Նիստը բացեց խորհրդի անդամ Էդուարդ Հայկազի Մաթևոսյանը:

Նա շնորհավորեց նոր խորհրդի անդամներին ընտրության կապակցությամբ և առաջարկեց բաց քվեարկությամբ ընտրել խորհրդի նախագահ և խորհրդի քարտուղար:

Ելույթ ունեցողները՝ Մինասյանը Մ.Հ., Ղազարյան Գ.Գ., Գամբուրյան Ս.Կ. և Երոյան Տ.Ս. առաջարկեցին խորհրդի նախագահ ընտրել Հրանտ Ռուբենի Շիրինյանին և խորհրդի քարտուղար ընտրել Ներսես խաչատուրի Հակոբյանին:

Քվեարկության դրված հարցն ընդունվեց խորհրդի անդամների կողմից միաձայն՝ 9 /ինը/ կողմ:

Բաց քվեարկությամբ խորհրդի նախագահ ընտրվեց Հրանտ Ռուբենի Շիրինյանը և խորհրդի քարտուղար Ներսես Խաչատուրի Հակոբյանը:

Որոշեցին՝

1. Խորհրդի նախագահ նշանակել Հրանտ Ռուբենի Շիրինյանին;
2. Խորհրդի քարտուղար նշանակել Ներսես Խաչատուրի Հակոբյանին:

Ելույթ ունեցավ խորհրդի քարտուղար Ն. Խ. Հակոբյանը;

Նա տեղեկացրեց <Բաժնետիրական ընկերությունների մասին> Օրենքի մի քանի հոդվածների վերաբերյալ և առաջարկեց ճշգրտել խորհրդի անդամների պարտականությունները՝

1. Ընկերության ղեկավար պաշտոնատար անձինք են հանդիսանում՝ խորհրդի նախագան, գործադիր մարմինը՝ գլխավոր տնօրենը և գլխավոր հաշվապան: Նրանց աշխատանքի վարձատրության պայմաններն որոշվել է նախկինում՝

ա) Շիրինյան Հրանտ Ռուբենի, որպես խորհրդի նախագահ – ըստ հաստիկացուցակի:

բ) Երոյան Տիգրան Սամվելի, գլխավոր տնօրեն /խորհրդի անդամ/ – 650,000 ՀՀ դրամ:

գ) Մակարյան Ազատուհի Սերյոժայի, որպես գլխավոր հաշվապահ, ըստ հաստիկացուցակի:

դ) Եսայան Հովհաննես Լևոնի, տնօրեն /խորհրդի անդամ/ արտադրության գծով – 350,000 ՀՀ դրամ:

2. Միաժամանակ Ընկերության խորհուրդը կրկին հաստատում է հետևյալ լիազորությունները մի քանի խորհրդի անդամների՝

ա) Խորհրդի նախագահի բացակայության ժամանակ նրա պարտականությունները անցնում են որևէ այլ խորհրդի անդամին, խորհրդի նախագահի կարգադրությամբ:

բ) Գլխավոր տնօրենի բացակայության ժամանակ նրա պարտականությունները անցնում են խորհրդի նախագահին կամ որևէ այլ խորհրդի անդամին, իսկ արտադրական հարցերով գործընթացների պարտականությունները կատարում է Հովհաննես Լևոնի Եսայանը – տնօրեն արտադրության գծով:

գ) Խորհրդի անդամ Սոնա Էմիլի Գրիգորյանը կատարում է գլխավոր տնօրենի խորհրդատուի պարտականությունները ըստ հաստիկացուցակի:

Խորհրդի նախագահ Հ. Ռ. Շիրինյան

Խորհրդի քարտուղար Ն. Խ. Հակոբյան

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն ԲԺ – 01/2023

<Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի ոսկերչական գործարան> ԲԲԸ-ի
բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողովի
արդյունքների մասին

ք. Երևան Արշակունյանց 12 27 հունիսի 2023թ.

<Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի ոսկերչական գործարան> ԲԲԸ-ի բաժնետերերի ընդհանուր ժողովը տեղի է ունեցել 2023 թվականի հունիսի 27-ին Ընկերության տարածքում:

<Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի ոսկերչական գործարան> ԲԲԸ-ի /այսուհետ նաև՝ Ընկերություն/ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցել են 19 բաժնետոմսի սեփականատեր, որոնք համատեղ տիրապետել են Ընկերության ձայնի իրավունք տվող 971 091 բաժնետոմսերի 88.6566 %-ին:
Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն իրավասուր է եղել սկսել իր աշխատանքը:

Ժողովի նախագահ՝ Հ. Ռ. Շիրինյանը, քարտուղար՝ Ն. Խ. Հակոբյանը:

Օրակարգում,

1. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի հաշվիչ հանձնաժողովի ընտրությունը:
2. Ընկերության տարեկան ժողովի վարման կարգի հաստատումը:
3. Ընկերության գործադիր մարմնի /գլխավոր տնօրենի և գլխավոր հաշվապահի/ զեկույցը և Ընկերության 2022թ. տարեկան ֆինանսատեխնիկական հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթի և վնասների հաշիվների բաշխման հաստատումը հաստատումը:
4. Վերստուգող հանձնաժողովի հաշվետվությունը:
5. Ընկերության խորհրդի քանակական կազմի հաստատումը և անդամների ընտրությունը:
6. Կառավարման մարմինների ձևավորումը, աշխատանքի վարձատրության պայմանների որոշումը:
7. Ընկերության 2022թ. աուդիտ իրականացնող անձի մրցույթի ժամկետի հաստատումը:
8. Այլ հարցեր:

Քվեարկության դրված հարցերը, քվեարկության արդյունքները և ընդունված որոշումները՝ ըստ օրակարգի հերթականության:

Ժողովի քարտուղար Ն. Խ. Հակոբյանն ընթրցեց Ընկերության խորհրդի նախագահի և գլխավոր տնօրենի ուղերձը բաժնետերերին:

Հարգելի բաժնետերեր.

2022 թվականը լի էր տարբեր տնտեսական և քաղաքական ճգնաժամային և հետճգնաժամային իրավիճակներով, որոնք Ընկերության կոլեկտիվի ու մենեջմենթի համար առաջացնում էին լրացուցիչ մարտահրավերներ՝ Ընկերության

գործունեության շարունակականության ապահովման և զարգացման ծրագրերի իրականացման առումներով:

Ձեզ բոլորին հայտնի է, որ Ընկերությունը ծանր կորուստ ունեցավ հանկարծամահ եղավ Ընկերության երկար տարիների ղեկավար և գլխավոր տնօրեն Է. Գ. Գրիգորյանը: Ի պատիվ նրա մեր ընկերոջ անբասիր, երկարամյա, բարեխիղճ արտադրության արտակարգ կազմակերպիչ կոլեկտիվի կոմից մեծ հարգանք և սեր վայելելու համար Ընկերությունը վերանվավեց նրա անունով և այժմ անվանվում է Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի ոսկերչական գործարան:

Այնուհանդերձ, ամփոփելով Ընկերության 2022 թվականի գործունեության արդյունքները, որոշակի գոհունակությամբ կարող ենք փաստել, որ 2022 թվականին Ընկերության կոլեկտիվի ու մենեջմենթի համառ ջանքերի շնորհիվ հաջողվեց ապահովել ոչ միայն Ընկերության անխափան աշխատանքն ինչպես ներքին, այնպես էլ եվրասիական շուկաներում:

Իրականացվել է Ընկերության Տնօրենների խորհուրդի կողմից հաստատված Ընկերության 2022 թվականի կապիտալ ներդրումների ծրագրով նախատեսված տեխնիկական վերազինման, սարքավորումների վերակառուցման և արդիականացման աշխատանքները, ինչի արդյունքում չի գրանցվել պերճանքի առարկաների, ոսկերչական իրերի, թանկարժեք զարդեղենի, ժամացույցների, հանդերձանքի պարագաների արտադրության և վաճառքի աճը:

Եթե ամփոփենք Ընկերության 2022 թվականի գործունեության հիմնական տնտեսական արդյունքները թվերով, ապա դրանք հետևյալն են. հիմնական միջոցները 2022 թվականի հաշվետու տարվա վերջում կազմել են 2,431,108 հազ. ՀՀ դրամ, պաշարները՝ 1,915,259 հազ. ՀՀ դրամ, հասույթը կազմել է 1,234,451 հազար ՀՀ դրամ, զուտ շահույթը հարկումից հետո՝ 16,431 հազար ՀՀ դրամ:

Վերոնշյալ խնդիրների լուծման և ցուցանիշների ապահովման գործում իր ուրույն տեղն ունի նաև Ընկերության տնօրենների խորհուրդը, որն 2022 թվականի ընթացքում անցկացրել է 7 նիստ, քննարկել է ընթացիկ և ռազմավարական մի քանի տասնյակ հարցեր և ընդունել Ընկերության կայուն գործունեության ապահովման համար անհրաժեշտ որոշումներ:

Ընկերության տնօրենների խորհուրդի հիմնական աշխատանքների շնորհիվ ապահովվել է նաև Ընկերության բաժնետերերի իրական մասնակցությունն Ընկերության կառավարմանն և առավել կարևոր որոշումների ընդունման հարցերում:

Ընկերությունը աշխատել է մասամբ առանց խափանումների, ապահովելով հուսալի և անխափան աշխատանքը գնորդ հաճախորդներին ներքին և եվրասիական տարածաշրջանում:

Առաջիկա տարում Ընկերության մենեջմենթը պետք է հաջող ապահովի «Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի ոսկերչական գործարան» ԲԲԸ-ի աշխատանքը:

1. Օրակարգի առաջին հարցը ներկայացրեց ժողովի քարտուղար Ն. Խ. Հակոբյանը: Նա նշեց, որ 2022 թվականի տարեկան բաժնետերերի ժողովի քվորումը հաստատելու, ժողովում օրակարգի հարցերի քվեարկության կարգի վերաբերյալ բաժնետերերին և նրանց ներկայացուցիչներին բացատրություններ տալու, քվեարկության սահմանված կարգը և բաժնետերերի՝ քվեարկությանը մասնակցելու իրավունքն ապահովելու, ձայների հաշվարկի իրականացման, քվեարկության

արդյունքների ամփոփման նպատակով պետք է ընտրել հաշվիչ հանձնաժողով՝ բաղկացած 3 անձից:

Ելնելով նշվածից, Ն. Խ. Հակոբյանն առաջարկեց որպես հաշվիչ հանձնաժողովի անդամներ ընտրել.

1. Արմինե Գևորգի Ժամհարյանին
2. Լիլիթ Սողոմոնի Սուքիասյանին
3. Անահիտ Սարգսի Սարգսյանին

Բաց քվեարկեցին. բոլոր թեկնածուների համար.

կողմ՝ 971 091 ձայն, դեմ չկա, ճեռնպահ՝ չկա:

Հաշվիչ հանձնաժողովը բաշխեց պարտականությունները և

Որոշեց. Ընկերության հաշվիչ հանձնաժողովի պարտականությունները բաշխել հետևյալ ձևով.

- Արմինե Գևորգի Ժամհարյանին՝ հաշվիչ հանձնաժողովի նախագահ,
- Լիլիթ Սողոմոնի Սուքիասյանին՝ հաշվիչ հանձնաժողովի անդամ,
- Անահիտ Սարգսի Սարգսյանին՝ հաշվիչ հանձնաժողովի անդամ:

2. Օրակարգի երկրորդ հարցը ներկայացրեց ժողովի նախագահ Հ. Ռ. Շիրինյանը ներկայացրեց տարեկան ժողովի վարման կարգը: Նա ասաց, որ ընդհանուր ժողովն անցկացվում՝ <Բաժնետիրական ընկերության> մասին օրենքով, Ընկերության կանոնադրությամբ և ներքին փաստաթղթերով սահմանված կարգով: Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի անցկացման կարգը սահմանվում է Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի որոշմամբ: Ընկերության բաժնետերերը իրավունք ունեն մասնակցել ընդհանուր ժողովին անձամբ կամ իրենց ներկայացուցիչների միջոցով: Ընկերության մասնակիցների ներկայացուցիչները պետք է ներկայացնեն իրենց պատշաճ լիազորությունները հաստատող փաստաթղթեր: Այդ փաստաթուղթը պետք է պարունակի տվյալներ ներկայացված անձի և ներկայացուցչի մասին տեղեկություններ համաձայն ՀՀ <Քաղաքացիական օրենսգրքի> հոդվածների համաձայն կամ վավերացված լինի նոտարի կողմից: Ընկերության չգրանցված բաժնետերը կամ Ընկերության բաժնետերի ներկայացուցիչը քվեարկությանը մասնակցելու իրավունք չունի:

3. Օրակարգի երրորդ հարցը ներկայացրեց գործադիր մարմնի ներկայացուցիչ գլխավոր տնօրեն Տ. Ս. Երոյանը: Նա մանրամասն ներկայացրեց 2022 թվականի տարեկան հաշվետվությունները՝ ներառյալ հաշվապահական հաշվեկշիռը, շահույթների և վնասների հաշիվը, նշեց որ Ընկերության հասույթը կազմում է 1,234,451 հազար ՀՀ դրամ, զուտ շահույթը կազմում է 21,211 հազար ՀՀ դրամ, իսկ հարկումից հետո՝ 16,431 հազար ՀՀ դրամ: Ընկերության հասույթը առաջացել է ոսկյա և ոչ ոսկյա իրերի վաճառքից:

Ամփոփելով ելույթը Տ. Ս. Երոյանն առաջարկեց հաստատել տարեկան հաշվետվությունները:

Ելույթ ունեցավ գլխավոր հաշվապահ Ա. Ս. Մակարյանը: Նա ներկայացրեց 2022 թվականի ֆինանսական ցուցանիշների գործակիցները, ինչպես նաև մանրամասն ներկայացրեց հաշվեկշիռի հիմնական ցուցանիշները: Ըստ Ընկերության 2022 թվականի համապարփակ ֆինանսական գործունեության արդյունքների Ընկերության 2022թ. տարվա շահույթը կազմում է 21,211 ՀՀ դրամ: Ա. Ս. Մակարյանը մանրակրկիտ բացատրեց տարեկան ժողովում գտնվող բաժնետերերին 2022թ. առաջացած շահույթի տարրերը: Ընկերության գոռծառնական գործունեությունից վնասը կազմում է 16,733 ՀՀ դրամ, ոչ գործառնական վնասը կազմում է 967,000 ՀՀ դրամ և ֆինանսական ծախսերի վնասը կազմում է 264,000 ՀՀ դրամ: Ընկերության ընդհանուր վնասը կազմում է 17,964 ՀՀ դրամ: Սակայն Ընկերությունում ձևավորվել է շահույթ ՀՀ կենտրոնական բանկի կողմից արտաժույթի փոխարժեքային տատանումներից օգուտ, որը կազմել է 39,175 ՀՀ դրամ: Այսպիսով 2022թ. շահույթը մինչև հարկումը ձևավորվել է միայն ԿԲ արժույթի տատանումներից և կապ չունի բուն ընկերության գործունեությունից:

Ամփոփելով ելույթը՝ Ա. Ս. Մակարյանն առաջարկեց հաստատել տարեկան հաշվետվությունները:

4. Օրակարգի չորրորդ հարցը ներկայացրեց վերստուգիչ հանձնաժողովի նախագահ Մ. Գ. Հարությունյանը: Նա ասաց, որ վերստուգիչ հանձնաժողովի կարծիքով, հաշվապահական հաշվետվությունները պատրաստվել են այնպես, որպեսզի ապահովվի ընկերության ակտիվների և պասիվների արտացոլումը 31.12.2022 թվականի դրությամբ, նրա գործունեության 2022 թվականի ֆինանսական արդյունքները, համապատասխանում են ՀՀ գործող հաշվապահական հաշվառման քաղաքականության նորմատիվ ակտերի պահանջներին: Ամփոփելով ելույթը՝ Մ. Գ. Հարությունյանն առաջարկեց հաստատել դրանք:

Բաց քվեարկություն՝ կողմ՝ 971,091, դեմ չկա, ձեռնպահ չկա

Որոշեցին՝ Հաստատել վերստուգիչ հանձնաժողովը հաշվետվությունը:

Փակ քվեարկությանը դրվեց 2022 թվականի տարեկան հաշվետվությունները:

Փակ քվեարկության արդյունքները. 971 091 ձայն, դեմ չկա, ճեռնպահ՝ չկա:

Որոշեցին.

1. Հաստատել Ընկերության 2022 թվականի տարեկան հաշվետվությունները, այդ թվում՝ հաշվապահական հաշվեկշիռը, շահույթների և վնասների հաշիվը:
2. Չվճարել 2022 թվականի գործնեության արդյունքում առաջացած շահույթից շահաբաժիներ:

5. Օրակարգի հինգերորդ հարցի առաջին մասը ներկայացրեց խորհրդի նախագահ Հ. Ռ. Շիրինյանը:

Ա) Նա առաջարկեց Ընկերության խորհրդի քանակական կազմը հաստատել 9 անդամից երեք տարի ժամկետով:

Փակ քվեարկեցին. Կողմ՝971,091, դեմ չկա, ձեռնպահ չկա:

Որոշեցին. Ընկերության խորհրդի քանակական կազմը հաստատել 9 անդամից երեք տարի ժամկետով:

Բ). Օրակարգի հինգերորդ հարցի երկրորդ մասը ներկայացրեց տարեկան ժողովի նախագահ Հ. Ռ. Շիրինյանը: Նա ընգծեց, որ նկատի ունենալով Ընկերության տնօրենների խորհրդի ներկա անդամների գործունեությունը, ինչպես նաև Ընկերության տնօրենների խորհրդի անդամների թեկնածուների վերաբերյալ նախնական քննարկումների արդյունքները, առաջարկվեց Ընկերության տնօրենների խորհրդն մեկ տարով ընտրել հետևյալ անձանց՝ Գրիգորյան Սոնա Էմիլի, Շիրինյան Հրանտ Ռուբենի, Երոյան Տիգրան Սամվելի, Եսայան Հովհաննես Լևոնի, Գամբուրյան Սարգիս Կարապետի, Մաթևոսյան Էդվարդ Հայկազի, Հակոբյան Ներսես Խաչատուրի, Մինասյան Մինաս Հովհաննեսի և Ղազարյան Գայանե Գուրգենի:

Փակ քվեարկությամբ

հ/հ	ԱԱՀ	Ձայների քանակը		
		կողմ	դեմ	ձեռնպահ
1.	Գրիգորյան Սոնա Էմիլի	107920	չկա	չկա
2.	Շիրինյան Հրանտ Ռուբենի	107914	չկա	չկա
3.	Մաթևոսյան Էդուարդ Հայկազի	107896	չկա	չկա
4.	Հակոբյան Ներսես Խաչատուրի	107905	չկա	չկա
5.	Մինասյան Մինաս Հովհաննեսի	107892	չկա	չկա
6.	Երոյան Տիգրան Սամվելի	107891	չկա	չկա
7.	Եսայան Հովհաննես Լևոնի	107891	չկա	չկա
8.	Գամբուրյան Սարգիս Կարապետի	107891	չկա	չկա
9.	Ղազարյան Գայանե Գուրգենի	107891	չկա	չկա

Որոշեցին. Ընկերության տնօրենի խորհրդի կազմը ընտրել հետևյալ կազմով՝ Հ. Ռ. Շիրինյան, Ս. Է. Գրիգորյան, Է. Հ. Մաթևոսյան, Մ. Հ. Մինասյան, Տ. Ս. Երոյան, Գ. Գ. Ղազարյան, Ն. Խ. Հակոբյան, Ս.Կ. Գամբուրյան և Հ. Լ. Եսայան:

6. Օրակարգի վեցերորդ հարցը ներկայացրեց ժողովի քարտուղար Ն. Խ. Հակոբյանը:

Նա նշեց, որ հիմք ընդունելով Ընկերության կանոնադրության 9.2 կետի 20-րդ ենթակետը /ղեկավար պաշտոնատար անձանց աշխատանքի պայմանների որոշումը/, 9.12 կետի 16-րդ ենթակետի /հաստիքացուցակի հաստատումը/, <Բաժնետիրական ընկերությունների մասին> Օրենքի 67 հոդվածի 24-րդ և 26-րդ կետերի, 83 հոդվածի 3-րդ կետի է) ենթակետի, 86 հոդվածի 1–ին կետի համաձայն՝ խորհրդի նախագահը չի կարող Ընկերությունում այլ վճարովի պաշտոն զբաղեցնել: Ընկերության ղեկավար պաշտոնատար անձինք են հանդիսանում՝ խորհրդի նախագան, գործադիր մարմինը՝

գլխավոր տնօրենը և գլխավոր հաշվապան: Ն. Խ. Հակոբյանը նշեց, որ նշված անձանց աշխատանքի վարձատրության պայմաններն որոշվել է նախկինում:

Խորհրդի նախագահի վարձատրության պայմանները - ըստ հաստիքացուցակի, գլխավոր տնօրենի՝ Երոյան Տ. Ս. – 650,000 ՀՀ դրամ, գլխավոր հաշվապահի – ըստ հաստիքացուցակի, արտադրության գծով տնօրենի՝ Եսայան Հ. Լ. - 345,000 ՀՀ դրամ, գլխավոր տնօրենի խորհրդատուհի – ըստ հաստիկացուցակի:

Միաժամանակ տարեկան ժողովը կրկին շեշտում է խորհրդի անդամների լիազորությունները՝

ա) Խորհրդի նախագահի բացակայության ժամանակ նրա պարտականությունները անցնում են որևէ այլ խորհրդի անդամին, խորհրդի նախագահի կարգադրությամբ:

բ) Գլխավոր տնօրենի բացակայության ժամանակ նրա պարտականությունները անցնում են խորհրդի նախագահին կամ որևէ այլ խորհրդի անդամին, իսկ արտադրական հարցերով գործընթացների պարտականությունները կատարում է – արտադրության գծով տնօրենը:

Փակ քվեարկությանը դրվեց գլխավոր տնօրենի և արտադրության գծով տնօրենի վարձատրության պայմանները:

Փակ քվեարկեցին. Կողմ՝971,091, դեմ չկա, ձեռնպահ չկա:

Որոշեցին՝ գլխավոր տնօրեն՝ Երոյան Տ. Ս. վարձատրությունը 650,000 ՀՀ դրամ, արտադրության գծով տնօրենի՝ Եսայան Հ. Լ. վարձատրությունը 345,000 ՀՀ դրամ:

7. Օրակարգի յոթերորդ հարցը ներկայացրեց գլխավոր տնօրեն Տ. Ս. Երոյանը: Նա առաջարկեց Ընկերության 2023 թվականի աուդիտ իրականացնող անձի մրցույթի ժամկետը հաստատել 2024 թվականի հունվար ամիսը: Այլ առաջարկություններ չկար:

Փակ քվեարկեցին. կողմ՝ 971,091 ձայն, դեմ չկա, ձեռնպահ՝ չկա:

Որոշեցին. Ընկերության աուդիտ իրականացնող անձի մրցույթի ժամկետը հաստատել 2024 թվականի հունվար ամսին:

8. Ընկերության տարեկան ժողովին հաշվետվություններ ներկայացրեցին՝

Իրավաբան Է. Հ. Մաթևոսյանը:

Նա տեղյակ պահեց բաժնետերերի ընդհանուր ժողովին ներկա դատական և քրեական նախաքննության գործընթացներից.

ա). Ընկերությունը 2020 թվականին <Երևանի ոսկերչական գործարան> ԲԲԸ-ի նկատմամբ հայց է ներկայացրել դատարան 24,312,000.00 ՀՀ դրամ բռնագանձման պահանջով: Սույն թվականի ապրիլ ամսինն դատարանի վճիռով հայցադիմումը բավարարվել է:

Ներկայումս Ընկերությունը դատարանի որոշումը ուղարկել է ՀՀ հարկադիր կատարումն ապահովող ծառայությանը:

բ). Ինչպես հայտնի է 2016 թվականին հոկտեմբերի 11-ին Ընկերությունը պայմանագիր է կնքել քաղաքացիներ Էմիլ և Սոնա Գրիգորյանների հետ որպես

արդյունաբերական նշանների իրավատիրոջ և հեղինակ իրենց պատկանող թիվ 394S, 471S և 472S արդյունաբերական նշանների /դիզայնի/ Ընկերության կողմից անվճար օգտագործելու վերաբերյալ: Այս պահին բոլոր վերը նշված արդյունաբերական նշանների /դիզայնի/ գործողության ժամկետները լրացել են և դրանց գործողությունները դադարեցվել են: Տիկին Ս. Է. Գրիգորյանի և Ընկերության կողմից ձեռնարկվում են անհրաժեշտ աշխատանքներ վերը նշված վկայականների ժամկետները վերականգնելու համար:

Անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը ներկայացվել է և այժմ դրական լուծումը հարցի ապահովված է:

գ). 2022 թվականի դեկտեմբերի 14 – 15-ի Ընկերության Արշակունյանց պողոտայի 12 հասցեում գտնվող խանութ սրահից գողության հետևանքով պատճառվել է 97,695,950.00 ՀՀ դրամ գումարի վնաս: ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների 2-րդ բաժնի քննիչ Մաքսիմ Սինդոյանի կողմից հարուցվել է քրեական գործ: Սույն թվականի ապրիլի 3-ին քննիչի կողմից Ընկերության անվտանգության աշխատակցի գործով առանձնացվել է քրեական գործ, որը նույն օրը ավարտվել է: Գործի նյութերին նույն օրը ծանոթացել է Ընկերության լիազորված անձը, իրավաբան Էդուարդ Հայկազի Մաթևոսյանը: Գործին ծանոթանալուց հետո Է. Հ. Մաթևոսյանը կարծիք է հայտնել, որ գործը լիարժեք չի քնվել և գրավոր միջնորդություն է ներկայացրել լրացուցիչ քննության կատարելու համար: Քննիչը իր սույն թվականի ապրիլի 3-ի որոշումով վերը նշված միջնորդությունը մերժել է: Վերը նշվածի կապակցությամբ սույն թվականի ապրիլի 13-ին Ընկերությունը գրավոր դիմում բողոք է ներկայացրել ՀՀ Գլխավոր դատախազին, ՀՀ Քննչական կոմիտեի նախագահին և գործը քննող քննիչին:

Ներկայումս անվտանգության աշխատակցի գործը քննվում է դատարանում, իսկ Ընկերությունը նրա նկատմամբ հարուցել է գույքային հայց պահանջելով հատուցել Ընկերությանը վերը նշված վնասի գումարը ամբողջությամբ:

դ). 2022 թվականի մայիսի 12-ին ՀՀ քննչական կոմիտեի կարևորագույն գործերի քննիչ Թունիյանի որոշումով առգրավել են Ընկերության ֆիրմային խանութներից շուրջ 350 մլն. ՀՀ դրամ արժողությամբ թանքարժեք իրեր: Ընկերության ներկայացուցիչների կողմից ներկայացված բողոքների հիման վրա, քննիչի առգրավման որոշումը բեկանվել է և որոշվել է թանքարժեք իրերը վերադարձնել Ընկերությանը: Սակայն վարույթ իրականացնող մարմնի կողմից դատարանների որոշումները չեն կատարվել, ավելին, սույն թվականի հունվարին կայացվել է նոր որոշում՝ առգրաված թանքարժեք իրերը քրեական գործով իրեղեն ապացույց ճանաչելու մասին:

Ներկայումս Ընկերության շահերը ներկայացնող փաստաբանի կողմից գործողություններ են ձեռնարկվում վերը նշված թանքարժեք իրերը վերադարձնելու համար:

Ժողովի քարտուղար Ն. Խ. Հակոբյանը:

Նա տեղյակ պահեց բաժնետերերի ընդհանուր ժողովին ներկայումս բաժնետերերի ցուցակի /ռեեստրի/ վերաբերյալ:

Համաձայն <Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիյա> ԲԲԸ-ի հաշվի օպերատոր <ԱՐԱՐԱՏԲԱՆԿ> ԲԲԸ-ի կողմից ստացված սույն թվականի մայիսի 5-ի ժամը 18:00 դրությամբ բաժնետերերի ցուցակի, ռեեստրի թղթային գրանցամատյանում նշված են 1441 բաժնետեր: 645 բաժնետերեր անցել են նույնականացման գործընթացը, որից 33 բաժնետեր վաճառել են իրենց պատկանող Ընկերության բաժնետոմսերը: Դեպոզիտարիաում գործընթացում գտնվում է 14 բաժնետերերի փաստաթղթեր, իսկ 17 բաժնետերերին մերժել են նույնականացմանը: Սուբեկտիվ ճշտված տվյալների համաձայն մոտ 130 բաժնետերեր մահացել են: Ընկերության բաժնետերեր են հանդիսանում Հայաստանի, Շվեդիայի, Ռուսաստանի Դաշնության, Ֆրանսիայի, Արգենտինայի, Վրաստանի և Ամերիկայի Միացյալ Նահանգների քաղաքացիներ, որոնցից մի քանիսը ունեն երկքաղաքացիություն: Ներկայումս լրացուցիչ 35 բաժնետերեր, իրավունք ունեն ստանալ 2021 թ. շահաբաժիններ:

Այլ հարցեր՝

Ելույթ ունեցավ ժողովի նախագահ Հ.Ռ. Շիրինյանը, նա տեղեկացրեց ժողովին, որ Էմիլ Գուրգենի Գրիգորյանին նվիրված հուշատախտակը կտեղադրվի մինչև տարեվերջ:

Սույն արձանագրությունը կազմված է 27.06.2023 թվականին և բաղկացած է 8 /ութ/ էջից:

Բաժնետերերի ընդհանուր ժողովի նախագահ՝ Հ. Ռ. Շահինյան

Բաժնետերերի ընդհանուր ժողովի քարտուղար՝ Ն. Խ. Հակոբյան

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն թիվ 1

<ԷՄԻԼ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ>
ԲԲԸ-ի
բաժնետերերի հերթական տարեկան ընդհանուր ժողովում քվեարկության
արդյունքների մասին

ք. Երևան Արշակունյանց 12 27 հունիսի 2023թ.

ԷՄԻԼ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ ԲԲԸ-ի բաժնետերերի հերթական տարեկան ընդհանուր ժողովը տեղի է ունեցել 2023 թվականի հունիսի 27-ին Ընկերության տարածքում:

Ընդհանուր ժողովի տեսակը՝	Հերթական տարեկան
Անցկացման ձևը՝	ժողով
Բաժնետերերի գրանցման մեկնարկի ժամը՝	16:00
Ավարտի ժամանակը՝	16:55
Ժողովի բացումը՝	17:00

Հաշվիչ հանձնաժողովի նախագահ՝ Ժամհարյան Արմինե Գևորգի
Հաշվիչ հանձնաժողովի անդամներ՝ Սուքիասյան Լիլիթ Սողոմոնի
Սարգսյան Անահիտ Սարգսի

ԷՄԻԼ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ ԲԲԸ-ի բաժնետերերի հերթական տարեկան ընդհանուր ժողովի օրակարգը՝

1. Ընկերության տարեկան ժողովի վարման կարգի հաստատումը:
2. Հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը:
3. Ընկերության գլխավոր տնօրենի և գլխավոր հաշվապահի տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթի և վնասների հաշիվների բաշխման հաստատումը:
4. Վերստուգող հանձնաժողովի հաշվետվությունը:
5. Ընկերության խորհրդի քանակական կազմի հաստատումը և անդամների ընտրությունը:
6. Գործադիր մարմնի ձևավորումը և աշխատանքի վարձատրության պայմանների որոշումը:
7. Ընկերության աուդիտն իրականացնող անձի մրցույթի ժամկետի հաստատումը:
8. Այլ հարցեր:

Բաժնետերերի արտահերթ ժողովում ներկա են եղել 19 բաժնետեր, որոնք համատեղ տիրապետել են Ընկերության ձայնի իրավունք տվող 971,091 բաժնետոմսերի 88.6566 %-ին:

Օրակարգի հարցերի վերաբերյալ քվեարկության արդյունքները՝

1. Ընկերության տարեկան ժողովի վարման կարգի հաստատումը: Բաց քվեարկություն՝ կողմ՝ 971,091, դեմ չկա, ձեռնպահ չկա

Որոշեցին՝ Տարեկան ժողովի վարման կարգը հստատել:
2. Հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը: Բաց քվեարկություն՝ կողմ՝ 971,091, դեմ չկա, ձեռնպահ չկա *Որոշեցին՝* Հաշվիչ հանձնաժողովը ձևավորել 3 անձից հետևյալ կազմով՝ Հաշվիչ հանձնաժողովի նախագահ՝ Ժամհարյան Արմինե Գևորգի, անդամներ՝ Սուքիասյան Լիլիթ Սողոմոնի և Սարգսյան Անահիտ Սարգսի:
3. Ընկերության գլխավոր տնօրենի և գլխավոր հաշվապահի տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթի և վնասների հաշիվների բաշխման հաստատումը: Փակ քվեարկություն՝ կողմ՝ 971,091, դեմ չկա, ձեռնպահ չկա *Որոշեցին՝* Հաստատել Ընկերության գլխավոր տնօրեն՝ Երոյան Տ. Ս. և գլխավոր հաշվապահ՝ Մակարյան Ա. Ս. տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթի և վնասների հաշիվների բաշխումը:
4. Վերստուգիչ հանձնաժողովի տարեկան հաշվապահական հաշվետվության ստուգման արդյունքների վերաբերյալ: Զեկուցող՝ Վերստուգիչ հանձնաժողովի նախագահ Հարությունյան Մ. Գ. Բաց քվեարկություն՝ կողմ՝ 971,091, դեմ չկա, ձեռնպահ չկա *Որոշեցին՝* Հաստատել վերստուգիչ հանձնաժողովը հաշվետվությունը:
5. Ընկերության խորհրդի քանակական կազմի հաստատումը Փակ քվեարկություն՝ կողմ՝ 971,091, դեմ չկա, ձեռնպահ չկա *Որոշեցին՝* Ընկերության խորհրդի կազմը ընտրել 9 անձից:
6. Ընկերության խորհրդի անդամների ընտրությունը: Առաջարկվեցին հետևյալ անձիք՝ Գրիգորյան Ս.Է., Շիրինյան Հ.Ռ., Երոյան Տ.Ս., Եսայան Հ.Լ., Գամբուրյան Ս.Կ., Մաթևոսյան Է.Հ., Հակոբյան Ն.Խ., Մինասյան Մ.Հ. և Ղազարյան Գ.Գ.: Փակ կոմուլատիվ քվեարկության արդյունքները՝

հ/հ	ԱԱՀ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1.	Գրիգորյան Ս.Է.	107920	0	0
2.	Շիրինյան Հ.Ռ.	107914	0	0
3.	Երոյան Տ.Ս.	107891	0	0
4.	Եսայան Հ.Լ.	107891	0	0
5.	Գամբուրյան Ս.Կ.	107891	0	0
6.	Մաթևոսյան Է.Հ.	107896	0	0
7.	Հակոբյան Ն.Խ.	107905	0	0
8.	Մինասյան Մ.Հ.	107892	0	0
9.	Ղազարյան Գ.Գ.	107891	0	0
	Ընդամենը՝	971091	0	0

Որոշեցին՝

Վերը նշված անձինք ընտրվել են Ընկերության խորհրդի կազմում մեկ տարի ժամկետով:

7. Ընկերության գլխավոր տնօրենի և արտադրության գծով տնօրենի վարձատրության պայմանների և չափերի վերաբերյալ
Փակ քվեարկություն՝ կողմ՝ 971,091, դեմ չկա, ձեռնպահ չկա

Որոշեցին՝

Ընկերության գլխավոր տնօրենի և արտադրության գծով տնօրենի վարձատրության պայմանները՝ Երոյան Տիգրան Սամվելի – 650,000.00 ՀՀ դրամ, Եսայան Հովհաննես Լևոնի – 345,000.00 ՀՀ դրամ:

8. Ընկերության աուդիտն իրականացնող անձի մրցույթի ժամկետի հաստատումը:
Փակ քվեարկություն՝ կողմ՝ 971,091, դեմ չկա, ձեռնպահ չկա

Որոշեցին՝

2024 թ. առաջին եռամսյակին հայտարարել աուդիտ իրականացնող անձի մրցույթ:

Քվեաթերթիկներն անվավեր չեն ճանաչվել:

Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Ժամհարյան Ա. Գ.

Հաշվիչ հանձնաժողովի անդամներ՝ Սուքիասյան Լ. Ս.

Սարգսյան Ա. Ս.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

ԷՄԻԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ ԲԲԸ

09 հունիսի 2023 թ. ք. Երևան

՝Հիմք ընդունելով Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի ոսկերչական գործարան ԲԲԸ /այսուհետ՝ Ընկերություն/ կանոնադրությունը և վերստուգիչ հանձնաժողովի և կանոնակարգի մասին, ինչպես նաև խորհրդի որոշմամբ

Ընկերության վերստուգիչ հանձնաժողովի նախագահ՝

Մարջան Գարեգինի Հարությունյանի և

Ընկերության վերստուգիչ հանձնաժողովի անդամներ՝

Արթուր Ռոբերտի Մաշկարյանի և

Մարինե Բուխարինի Մկրտչյանի

կողմից իրականացվել է 2022 թվականի տարեկան հաշվապահական հաշվետվությունների վերստուգում:

Վերստուգումը կատարվել է ս/թ մարտի 3 -ից մինչև ապրիլի 3-ը:

Ընկերության լրիվ անվանումը՝

Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի ոսկերչական գործարան բաց բաժնետիրական ընկերություն

Հասցե՝ 0023, ՀՀ, ք. Երևան, Արշակունյանց փող., 12 շենք

Պետական գրանցման վկայականի համարը և ամսաթիվը՝ 02Ա 050339, 11.04.2001 թ.

Պետական գրանցման համարը՝ 286.130.04189

ՀՎՀՀ՝ 02556646

Սույնով վերստուգիչ հանձնաժողովը սահմանել է հետևյալը.

Վերստուգիչ ստուգումը ներառել է հաշվապահական հաշվետվություններում պարունակվող թվային տվյալների և բացատրությունների ընտրանքային հիմքի վրա ստուգումը:

Վերստուգիչ հանձնաժողովի կարծիքով՝ անցկացված ստուգումը բավարար հիմքեր է տալիս հաշվետվության արժանահավատության մասին կարծիք հայտնելու համար:

Վերստուգիչ հանձնաժողովը ստուգման ընթացքում պարզել է, որ ֆինանսատնտեսական գործունեություն իրականացնելիս Ընկերությունը ղեկավարվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, հարկային և այլ իրավական ակտերի նորմերով:

Հաշվապահական հաշվետվությունները պատրաստվել են՝ ելնելով Ընկերության հաշվապահական հաշվառման և հաշվետվողականության մասին ՀՀ գործող օրենսդրության նորմատիվ ակտերի և հաշվապահական հաշվառման քաղաքականության պահանջներից:

Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, վարման սկզբունքներն ու մեթոդները ամրագրված են գլխավոր տնօրենի հրամանով:

Վերստուգիչ հանձնաժողովը չի հայտնաբերել հաշվապահական հաշվառման վարման և հաշվապահական հաշվետվությունների պատրաստման սահմանված կարգի լուրջ խախտումներ, որոնք կարող են էապես ազդել հաշվապահական հաշվետվությունների արժանահավատության վրա: Ընկերության շահերի էական խախտումներ, նրա բաժնետերերի և գործընկերների /կոնտրագենտների/ ֆինանսատնտեսական գործունեության վարման պարտավորությունների նկատմամբ էական խախտումների փաստեր բացակայում են:

Ընկերությունը վերջին անգամ ընդհանուր ժողովներում հաստատված շահութաբաժինների բաշխումն իրականացվել 2021 թ.: Ընկերության զուտ շահույթը 2021 թ. դրությամբ կազմել եր 89,160,000.00 ՀՀ դրամ: Զուտ շահույթը բաշխվել է համաձայն Ընկերության տարեկան ժողովի արդյունքների ժամանակ:

տարեթիվ	Բաժանման ենթակա շահաբաժինի մեծությունը, ՀՀ դրամ	Մեկ բաժնետոմսի ընկած շահաբաժինը, ՀՀ դրամ
2021	71,327,151.00	65.1187

Անցած տարիներից չպահանջված շահաբաժիններեի մեծությունը կազմում է՝ 115,281 հազ. ՀՀ դրամ: Չպահանջված շահաբաժինների մեծությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ գումարը[1] պատկանում է բաժնետերերին, որոնք չեն անցել կամ գտնվում են նույնականացման գործընթացքում:

Ընկերության գործնեությունից առաջացած զուտ շահույթը 2022 թ. կազմում է՝ 21,211 հազ. ՀՀ դրամ մինչև հարկումը, հարկքումից հետո կազմում է՝ 16,431 հազ ՀՀ դրամ:

Վերստուգիչ հանձնաժողովի կարծիքով այդ գումարը պետք ուղղվի Ընկերության կարիքների համար:

Ընկերությունը ներկայումս ունի 1441 բաժնետեր, որոնց պատկանում է 1,095,340 սովորական անվանական բաժնետոմս:

Ընկերության պարտքը առ մարտի 3-ի 2023թ. դրությամբ բաժնետերերին կազմում է 165,332 հազ. ՀՀ դրամ: Այդ գումարը ձևավորվել է 2001 թ. մինչ այսօր բաժնետերերի նույնականացման գործընթացը չանցնելու և Ընկերությանը չտրամադրելով իրենց բանկային հաշիվների տվյալները:

՝Վերստուգիչ հանձնաժողովի կարծիքով այդ գումարները պետք ՝ դեպոնացվեն ըստ ժամանակացույցի:

[1] - թողարկողի բաժնետոմսերի վերաբերյալ հայտարարված շահաբաժինները թողարկողի կողմից վճարվել են ոչ ամբողջ ծավալով՝ թողարկողի և թողարկողի բաժնետոմսերի ռեեստրավարների մոտ բաժնետերերի մեծամասնության ակտուալ (գործող) վճարային վավերապայմանների, հասցեների և անձնագրային տվյալների բացակայության պատճառով: Համաձայն <Բաժնետիրական ընկերությունների մասին> Օրենքի 51-րդ հոդվածի 4-րդ կետի <Բաժնետերը, անվանատերերը պարտավոր են Ընկերության ռեեստրը վարողին ժամանակին տեղեկացնել իրեն վերաբերող սույն հոդվածով սահմանված տվյալների փոփոխության մասին: Նշված տվյալները բաժնետիրոջ, անվանատիրոջ կողմից չներկայացնելու դեպքում Ընկերությունը և ռեեստր վարող մասնագիտացված կազմակերպությունը պատասխանատվություն չեն կրում բաժնետիրոջը պատճառված վնասի համար:>

Դատախազության կողմից, 2022թ-ի մայիսի 12-ին առգրավվել է Ընկերության 349.473.664-58 ՀՀ դրամի պատրաստի արտադրանք :

2022 թ. դեկտեմբերի 14-ի լույս 15-ին Ընկերության խանութ սրահում տեղի է ունեցել կողոպուտ որի արդյունքում հափշտակել էն 94,984,939.99 ՀՀ դրամի ոսկերչական իրեր:

Բոլոր տեսախցիկների տեսագրումները ուղարկվել են քննչական մարմիններին, սակայն մինչև այսօր չեն հայտնաբերել կողոպուտ անողներին և չեն վերադարցրել հափշտակած ոսկերչական իրերը:

Ընկերության բաժնետերերը բողոքում են պատկան մարմինների չարամտորեն անգործնեությունից:

Վերստուգիչ հանձնաժողովի անդամները հանդիսանալով Ընկերության բաժնետեր, իրենց բողոք են հայտնում քննչական մարմինների անգործնեության վերաբերյալ:

Վերը նշված հարցերի մասին խնդրում ենք ժողովը քննարկի և համապատասխան դիմում-բողոք ներկայացվի դատախազությանը:

Ընդհանուր առմամբ, ընկերության հաշվապահական հաշվետվությունները թույլ են տալիս ձևավորել ֆինանսատնտեսական գործընթացների և գործունեության

արդյունքների վերաբերյալ ամբողջական և օբյեկտիվ տեղեկատվություն, որն անհրաժեշտ է օպերատիվ կառավարման և կառավարման, ինչպես նաև վարկատուների, հարկային, ֆինանսական, բանկային մարմինների և այլ շահագրգիռ կազմակերպությունների և անձանց կողմից դրա օգտագործման համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վերստուգիչ հանձնաժողովի կարծիքով, հաշվապահական հաշվետվությունները պատրաստվել են այնպես, որպեսզի ապահովվի ընկերության ակտիվների և պասիվների արտացոլումը 31.12.2022 թվականի դրությամբ, նրա գործունեության 2022 թվականի ֆինանսական արդյունքները, համապատասխանում են ՀՀ գործող հաշվապահական հաշվառման քաղաքականության նորմատիվ ակտերի պահանջներին:

վերստուգիչ հանձնաժողովի նախագահ՝ Հարությունյան Մ.Գ.

Անդամներ՝ Մաշկարյան Ա.Ռ

Մկրտչյան Մ.Բ.

ԷՄԻԼ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ ԲԲԸ

Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողով

ՀՀ ք. Երևան Արշակունյանց 12 27. 06. 2023թ. ժամը 17:00

Քվեաթերթիկ

Բաժնետեր՝ _____, քանակը՝ ____

ԱԱՀ, անձնագիր, լիազորագիր

1. Խորհրդի քանակական կազմի հաստատումը,

Ընկերության խորհրդի անդամների քանակական կազմը սահմանել 9 անձից	կողմ	դեմ	ձեռնպահ

2. Ընկերության տնօրենների խորհրդի անդամների ընտրություններ գումարային /կումուլյատիվ/ քվեարկությամբ

Հետևյալ անձանց ընտրել Ընկերության տնօրենների խորհրդի անդամներ մեկ տարի ժամկետով:

հ/հ	ԱԱՀ	Բաժ. քան.	Ձայների քանակը		
			կողմ	դեմ	ձեռնպահ
1.	Գրիգորյան Սոնա Էմիլի	55,481.5			
2.	Շիրինյան Հրանտ Ռուբենի	1,522			
3.	Մաթևոսյան Էդուարդ Հայկազի	543			
4.	Հակոբյան Ներսես Խաչատուրի	356			
5.	Մինասյան Մինաս Հովհաննեսի	126			
6.	Երոյան Տիգրան Սամվելի	չունի			
7.	Եսայան Հովհաննես Լևոնի	չունի			
8.	Գամբուրյան Մարգիս Կարապետի	չունի			
9.	Ղազարյան Գայանե Գուրգենի	չունի			

3. Ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթի և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշում ընդունումը

Տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթի և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը	կողմ	դեմ	ձեռնպահ
Շահաբաժինների վճարման մասին			

4. Գործադիր մարմնի աշխատավարձի մեծությունը

	ՀՀ դրամ	կողմ	դեմ	ձեռնպահ
Երոյան Տիգրան Սամվելի	650,000.00			
Եսայան Հովհաննես Լևոնի	345,000.00			

5. Ընկերության 2023 թվականի աուդիտ իրականացնող անձի ընտրությունը

2024թ. հունվարին հայտարարել աուդիտի մրցույթ 2023թ. համար	կողմ	դեմ	ձեռնպահ

Բաժնետերի ստորագրությունը՝ _____